ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 30.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ

քննող անձի

թիվ ՍՑ-ԷՍ-2018/101

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ) ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 09.07.2018թ. թիվ 03/26-3/12414-18 գրությամբ «Սմարթլայն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01548908) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

1. **<u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 03.07.2018թ. թիվ 54 գրության հիման վրա, 09.07.2018թ. նախաձեռնել է «Սմարթլայն» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ նաև Ցուցակ) ներառելու ընթացակարգ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

2. «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 03.07.2018թ. թիվ 54 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«19.06.2018թ. տեղի է ունեցել «ԱՍՀԱԻ-ԳՀԱՊՁԲ-18/3» ընթացակարգով գնանշման հարցման մրցույթ, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Սմարթլայն» ՍՊԸ-ն, սակայն 26.06.2018թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից ստացված տեղեկատվության համաձայն՝ վերոնշյալ ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունեցել է հարկային պարտավորություններ, որի արդյունքում անհրաժեշտ է «Սմարթլայն» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Մարիամ Խաչատրյանը:

3. «Սմարթլայն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«Սմարթլայն» ՍՊԸ-ն 13.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ համաձայն ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. թիվ 3137 գրությամբ Ընկերությանը տրամադրված եզրակացության՝ 19.06.2018թ. 22,741,477 ՀՀ դրամ հարկային պարտավորությունն առաջացել է Ընկերության կողմից 19.06.2018թ. նախորդ տարիների համար ներկայացրած ճշտված հաշվարկների արդյունքում»:

Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստերին մասնակցում էին Ընկերության տնօրեն Տիգրան Ղարիբյանը և լիազորված ներկայացուցիչ Մելսիդա Ղարիբյանը:

4. ՍՑ-ԷՍ-2018/104 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

Բողոքներ քննող անձն ուսումնասիրել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2018թ. թիվ 03/26-3/12414-18 գրությունը և կից փաստաթղթերը, «Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի 03.07.2018թ. թիվ 54 գրությունը, «ԱՍՀԱԻ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ԱՍՀԱԻ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 19.06.2018թ. նիստի թիվ 2, 25.06.2018թ. նիստի թիվ 3, 27.06.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությունները, «Սմարթլայն» ՍՊԸ-ի 13.07.2018թ. Բողոքներ քննող անձին ուղղված գրությունը, «Սմարթլայն» ՍՊԸ-ի հայտի պատճենը.

«Աշխատանքի և սոցիալական հետազոտությունների ազգային ինստիտուտ» ՊՈԱԿ-ի կարիքների համար գրենական պիտույքներ և գրասենյակային նյութերի գնման նպատակով կազմակերպված «ԱՍՀԱԻ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (այսուհետ՝ նաև Ընթացակարգ) հայտ է ներկայացրել «Սմարթլայն» ՍՊԸ-ն՝ Ընթացակարգի մի շարք չափաբաժինների մասով:

«Սմարթլայն» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N2 հավելվածով՝ ընթացակարգին մասնակցելու նպատակով հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԱՍՀԱԻ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Հանձնաժողովը 19.06.2018թ. նիստի թիվ 2 արձանագրությամբ որոշել է Ընթացակարգի 3, 4, 5, 6, 7, 8, 10, 11, 12, 13, 14, 15, 20, 22, 26, 27, 31, 34, 42, 46, 47, 48, 50, 51, 52, 53, 56, 58 և 63 չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Սմարթլայն» ՍՊԸ-ին:

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ «Սմարթլայն» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.06.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ

օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 20,657,059 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորություն:

Հանձնաժողովը 27.06.2018թ. նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրել է «Սմարթլայն» ՍՊԸ-ի ժամկետանց հարկային պարտավորություն ունենալու փաստը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ)՝

- 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին.
- 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում.
- 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտից հետո քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն .զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը.
- 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին

տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

«ԱՍՀԱԻ-ԳՀԱՊՁԲ-18/3» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 7.2 կետի համաձայն՝ հայտերը գնահատվում են նույն հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում նույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 7.12 կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հանձնաժողովի քարտուղարը հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղ զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև նույն հրավերի 1-ին մասի 2.5 կետով նախատեսված՝ «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը: Ընդ որում նույն ենթակետում հարցումն ուղարկվում է Ashkhen_Papoyan@taxservice.am էլեկտրոնային փոստի հասցեին նույն հրավերի 8-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան՝ էլեկտրոնային նամակի

պատճենները միաժամանակ ուղարկելով Lusine_Ghahramanyan@taxservice.am և procurement@minfin.am էլեկտրոնային փոստի հասցեներին.

• 7.14 կետի համաձայն՝ կոմիտեն նույն հրավերի 1-ին մասի 7.13 կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին նույն հրավերի 9-րդ հավելվածով նախատեսված ձևին համապատասխան տեղեկատվություն: Նույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է Օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում նույն հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջներին և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մեժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրված տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Նույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում նույն հրավերի 1-ին մասի 7.20 կետի 2-րդ ենթակետով նախատեսված ընթացակարգը:

• 7.15 կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում գրավոր եղանակով տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Ընդ որում, եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հայտով ներկայացված

հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Ընթացակարգի քննության նպատակով Բողոքներ քննող անձի կողմից հրավիրված նիստի ժամանակ Ընկերության տնօրենը հայտնեց, որ Ընկերության կողմից ժամանակին կատարվել են հարկային պարտավորությունների մարմանն ուղղված վճարումները, իսկ ՀՀ ԿԱ ՊԵԿ եզրակացության մեջ նշված՝ 20,657,059 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է այն բանից հետո, երբ Ընկերությունը, 19.06.2018թ. դրությամբ լինելով հարկային մարմնի կողմից ստուգման գործընթացի մեջ՝ տվել է նախորդ տարիների համար հաշվարկների ճշգրտում (ուղղում), ինչի մասին է վկայում նաև ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. թիվ 3137 գրությամբ Ընկերությանը տրամադրված պարզաբանումը:

Ընկերությունը Բողոքներ քննող անձին ներկայացրեց.

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. «Սմարթլայն» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 18.06.2018թ. դրությամբ ունեցել ժամկետանց հարկային պարտավորություն չի ունեցել:

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. «Սմարթլայն» ՍՊԸ-ին տրված՝ «Հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների և միասնական հաշվում առկա գումարների վերաբերյալ» տեղեկանքը, ըստ որի Ընկերությունը 19.06.2018թ. դրությամբ ունեցել է 22,741,477 ՀՀ դրամի հարկային պարտավորություններ՝ (ԱԱՀ գծով՝ 9,369,264 ՀՀ դրամ, ներմուծման մասով ԱԱՀ գծով՝ 2,114,374 ՀՀ դրամ, շահութահարկի գծով՝ 11,257,839 ՀՀ դրամ):

- ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից 25.06.2018թ. թիվ 3137 գրությամբ Ընկերությանը տրամադրված պարզաբանումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 6-րդ հոդվածի՝

• 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ.

• 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

• 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող անձի մոտ՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Այսպիսով, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ն հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով հայտը ներկայացվելու օրվա՝ 19.06.2018թ. դրությամբ, ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված շեմը գերազանցող՝ 20,657,059 ՀՀ դրամի չափով ժամկետանց հարկային պարտավուրություն:

Բողոքներ քննող անձն արձանագրում է նաև, որ ըստ հարկային մարմնի կողմից տրված պարզաբանման՝ Ընկերության 19.06.2018թ. ժամկետանց հարկային պարտավորությունն առաջացել է 19.06.2018թ. կատարված՝ նախորդ տարիների համար հաշվարկների ճշգրտման (ուղղման) արդյունքում:

Վերոգրյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ Ընկերության ժամկետանց հարկային պարտավորություններն առաջացել են ոչ վերջինիս հարկային պարտավորությունների ոչ պատշաճ կատարման հետևանքով, այլ պայմանավորված են եղել Ընկերության համար անկանխատեսելի հանգամանքներով, ուստի, նշված պայմաններում Ընկերության ժամկետանց հարկային պարտավորությունների փաստի արձանագրումը չի կարող որակվել որպես մասնակցի կողմից իր հարկային պարտավորությունների չկատարման կամ անբարեխիղճ կատարման արդյունք:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Բողոքներ քննող անձը գտնում է, որ «Սմարթլայն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 09.07.2018թ. թիվ 03/26-3/12414-18 գրությամբ «Սմարթլայն» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 01548908) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրվանից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ **ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ**